Հայտարարություն

Մաքսային փորձաքննություն իրականացնող կազմակերպությունների 2025 թվականի հավատարմագրում իրականացնելու վերաբերյալ

2025 թվականի համար մաքսային փորձաքննություն իրականացնող կազմակերպությունների հավատարմագրման նպատակով, ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 7-ի թիվ 2118-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ ՀՀ պետական եկամուների կոմիտեն առաջարկում է մինչև 2025 թվականի փետրվարի 21-ը marine_amirkhanyan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին ներկայացնել հայտը (համաձայն կից **Ձև 1**-ի) և նշված որոշմամբ հաստատված հավելվածի 9-րդ կետով սահմանված փաստաթղթերը և տեղեկությունները:

Կոմիտեին անհրաժեշտ են հետևյալ մաքսային փորձաքննությունների տեսակները՝ ապրանքագիտական, նյութագիտական, մշակութաբանական, փաստաթղթաբանական, ձգաբանական:

Հավատարմագրման չափանիշները և կազմակերպությունների կողմից ներկայացման ենթակա փաստաթղթերը և (կամ) տեղեկությունները հետևյալն են.

1) փորձագիտական կազմակերպությունը պետք է հանդիսանա ՀՀ-ում գրանցված իրավաբանական անձ (*անհրաժեշտ է ներկայացնել պետական գրանցման վկայականի պատճենը*),

2) փորձագիտական կազմակերպությունը պետք է ունենա առնվազն 3 տարվա պետական գրանցում (*անհրաժեշտ է ներկայացնել պետական գրանցման վկայականի պատճենը*),

3) փորձագիտական կազմակերպությունը պետք է իրականացրած լինի տվյալ տեսակի փորձաքննություն՝ հայտի ներկայացման օրվան նախորդող երկու օրացուցային տարվա ընթացքում (*անհրաժեշտ է ներկայացնել կազմակերպության կողմից առաջարկվող յուրաքանչյուր տեսակի փորձաքննության մասով՝ հայտի ներկայացման օրվան նախորդող երկու օրացուցային տարվա ընթացքում կնքված առնվազն մեկ պայմանագիր և այդ պայմանագրի շրջանակներում մատուցված ծառայության հարկային հաշիվ կամ հաշիվ վավերագիր կամ հանձնման-ընդունման ակտ*),

4) փորձագիտական կազմակերպությունը պետք է ունենա փորձաքննություն իրականացնող աշխատակիցներ, որոնք հանդիսանում են մաքսային մարմինների կողմից սահմանված նպատակներով փորձաքննություն իրականացնող փորձագետներ և վերջիններս հայտի ներկայացման օրվան նախորդող երկու օրացուցային տարվա ընթացքում չեն ենթարկվել վարչական կամ քրեական պատասխանատվության փորձաքննության՝ տվյալ տեսակի համար օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտման կամ կեղծ փորձագիտական եզրակացությունների տրամադրման համար (*անհրաժեշտ է լրացնել և ներկայացնել կից **Ձև 2**-ը, ինչպես նաև փորձագետների հետ կնքված աշխատանքային պայմանագրերի պատճենները*),

5) փորձագիտական կազմակերպությունը պետք է ունենա մաքսային փորձաքննության իրականացման համար անհրաժեշտ տեխնիկական կամ տեխնոլոգիական համապատասխան հագեցվածություն (*անհրաժեշտ է լրացնել և ներկայացնել կից **Ձև 3**-ը*),

6) շարժական գույքի վնասներ գնահատող փորձագետները պետք է բավարարեն Հայաստանի ավտոապահովագրողների բյուրոյի խորհրդի կողմից 24.12.2019թ թիվ 47-Լ որոշմամբ սահմանված RL 1-003 կանոններին (*անհրաժեշտ է հայտին կից ներկայացնել նաև տվյալ կանոնների 2.1 աղյուսակով սահմանված պահանջների առկայությունը հիմնավորող փաստաթղթերը*):

Հայտին կից անհրաժեշտ է նաև ներկայացնել մատուցվող փորձաքննության ծառայությունների ցանկն ու սակագները՝ համաձայն կից **Ձև 4**-ի, որում ներկայացված են նաև ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից գնային առաջարկի վերաբերյալ տեղեկությունները: